

Արձանագրություն

<<Երևանի պետական համալսարան>> պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2012թ. փետրվարի 9-ին տեղի ունեցած թիվ 1 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 71-ը (յոթանասունմեկ):

Նիստը նախագահում էր ռեկտոր Ա. Հ. Միմոնյանը:

Ռեկտոր Ա. Հ. Միմոնյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. ԵՊՀ գիտական խորհրդի՝ որակի ապահովման մշտական հանձնաժողով ստեղծելու մասին: (Ձեկ.՝ ռեկտոր Ա. Հ. Միմոնյան)
2. ԵՊՀ ներքին կանոնակարգերի նախագծերի մշակման աշխատանքները համակարգող մշտական հանձնաժողովը վերանվանելու և կազմում փոփոխություն մտցնելու մասին: (Ձեկ.՝ ռեկտոր Ա. Հ. Միմոնյան)
3. ԵՊՀ գիտական խորհրդի 2011-2012 ու.ս. տարվա 2-րդ կիսամյակի ժամանակացույցի հաստատում: (Ձեկ.՝ գիտքարտուղար Մ. Ա. Սողոմոնյան)
4. Դոցենտի, պրոֆեսորի գիտական կոչումների շնորհում: (Ձեկ.՝ հումանիտար մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Գ. Հ. Պետրոսյան, բնագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ա. Սահակյան)
5. ԵՊՀ ֆակուլտետի օրինակելի կանոնադրության (նոր խմբագրությամբ) հաստատում: (Ձեկ.՝ ԵՊՀ իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի նախագահ Գ. Ս. Ղազինյան)
6. 2012-2013 ուսումնական տարվա ԵՊՀ բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսման վարձավճարների չափերի սահմանում: (Ձեկ.՝ պրոռեկտոր Գ.Գ. Գևորգյան)
7. Ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգում լրացում կատարելու մասին: (Ձեկ.՝ պրոռեկտոր Գ.Գ. Գևորգյան)
8. ԵՊՀ անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատում: (Ձեկ.՝ ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Գ. Ժամհարյան)
9. Տեղեկատվություն դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների արդյունքների մասին: (Ձեկ.՝ ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Գ. Ժամհարյան)
10. ԵՊՀ ինժեներական հոգեբանության լաբորատորիան <<Անձի և մասնագիտական գործունեության հոգեբանության գ/հ լաբորատորիա>> վերանվանելու մասին: (Ձեկ.՝ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի դեկան Ա. Ս. Բաղդասարյան)
11. Ընթացիկ հարցեր

11.1 ՀՀ ԳԱԱ ակադ.-ներ Դ. Սեդրակյանի, Է. Չուբարյանի և ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Յ. Վարդանյանի համատեղ աշխատանքների շարքը Ակադ. Վ. Համբարձումյանի անվան մրցանակի ներկայացնելու մասին:

11.2 ԵՊՀ կենտրոնների՝ բազային ֆինանսավորման ներկայացվող ծրագրերի հայտերը երաշխավորելու մասին:

Պրոռեկտոր Գ. Գևորգյանն ընթացիկ հարցերի շարքում առաջարկեց ԵՊՀ կենտրոնների՝ բազային ֆինանսավորման ներկայացվող ծրագրերի հայտերը երաշխավորելու հարցը, իսկ ֆիզիկայի ֆակուլտետի դեկան Ռ. Ավագյանի կողմից առաջարկվեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Դ. Սեդրակյանի, Է. Չուբարյանի և թղթ. անդամ Յ. Վարդանյանի համատեղ աշխատանքների շարքը Ակադ. Վ. Համբարձումյանի անվան մրցանակի ներկայացնելու հարցը:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

1. Գիտխորհրդի անդամները **լսեցին** ԵՊՀ գիտական խորհրդի՝ Որակի ապահովման մշտական հանձնաժողով ստեղծելու մասին: (Ձեկ.՝ ռեկտոր Ա. Հ. Միմոնյան):

Որոշեցին.- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Որակի ապահովման մշտական հանձնաժողովի ստեղծումը հանդիսանում է ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի դրույթների իրականացման կարևոր գրավական՝

1.1 Ստեղծել ԵՊՀ գիտական խորհրդի Որակի ապահովման մշտական հանձնաժողով հետևյալ կազմով

1. Գևորգյան Էմիլ Մուսի (նախագահ) կենսաբանության ֆակուլտետի դեկան,
2. Բուդաղյան Արմեն Ստեփանի, ուս. աշխատանքների գծով պրոռեկտորի տեղակալ,
3. Աղայան Ժասմենա Արտաշեսի, հետբուհ. լրացուցիչ կրթության վարչության պետ,
4. Մկրտիչյան Արթուր Երվանդի, սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան,
5. Սաղյան Աշոտ Մերոբի, դեղագործական քիմիայի ամբիոնի վարիչ,
6. Դիլբանդյան Սամվել Աղվանի, քրեական դատ. և կրիմինալիստ. ամբիոնի վարիչ,
7. Ազգալոյսյան Հարություն Աշոտի, տնտես. ֆակ. մագիստր. 2-րդ կուրսի ուսանող

1.2 Հանձնարարել ԵՊՀ ֆակուլտետներին՝ ստեղծել ֆակուլտետի գիտական խորհրդի Որակի ապահովման մշտական հանձնաժողովներ՝ կազմված 5 անդամներից (որոնցից մեկը ուսանող):

1.3 Հանձնարարել ԵՊՀ գիտական խորհրդի մշտական հանձնաժողովների նախագահներին՝ մեկամսյա ժամկետում մշակել և ԵՊՀ գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնել իրենց ղեկավարած հանձնաժողովների գործունեության աշխատակարգերը:

1.4 Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2. **Լսեցին.**- ԵՊՀ ներքին կանոնակարգերի նախագծերի մշակման աշխատանքները համակարգող մշտական հանձնաժողովը վերանվանելու և կազմում փոփոխություն մտցնելու մասին: (Զեկ.՝ ռեկտոր Ա. Հ. Սիմոնյան):

Որոշեցին.- Հաշվի առնելով, որ ԵՊՀ ներքին կանոնակարգերի նախագծերի մշակման աշխատանքները համակարգող հանձնաժողովի գործառույթներն ավելի լայն են քան սույլ կանոնակարգերի նախագծերի մշակումը, նկատի ունենալով այդ հանձնաժողովի կազմում համալսարանի գիտական քարտուղարի ընդգրկման անհրաժեշտությունը՝

2.1 Անվանափոխել Երևանի պետական համալսարանի ներքին կանոնակարգերի նախագծերի մշակման աշխատանքները համակարգող հանձնաժողովը՝ այն վերանվանելով **Երևանի պետական համալսարանի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի:**

2.2 ԵՊՀ իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի կազմում հաստատել ԵՊՀ գիտական քարտուղար Մենուա Անդրանիկի Մոդոմոնյանին:

2.3 Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ գիտական խորհրդի 2011թ. հոկտեմբերի 21-ին ընդունված թիվ 12/4.3 որոշումը:

2.4 Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

3. **Լսեցին.** - ԵՊՀ գիտական խորհրդի 2011-2012 ուս. տարվա 2-րդ կիսամյակի ժամանակացույցի հաստատման մասին: (Զեկ.՝ գիտքարտուղար Մ. Ա. Սողոմոնյան): Նշվեց, որ ժամանակացույցը նախապես ուղարկվել է բոլոր ֆակուլտետներին և առաջարկությամբ են հանդես եկել ռադիոֆիզիկայի ֆակուլտետը՝ գրադարանային ֆոնդի վերաբերյալ հաղորդում լսելու առաջարկով և սոցիոլոգիայի ֆակուլտետը՝ միգրացիայի կենտրոն ստեղծելու առաջարկով:

Արտահայտվեցին.- ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, պրոռեկտոր Ռ. Լ. Մարկոսյանը, հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության պետ Կ. Գրիգորյանը:

Պրոռեկտոր Ռ. Մարկոսյանն առաջարկեց ժամանակացույցում՝ հունիս ամսվա բաժնում ներառել ուսանողական ինքնակառավարման զարգացման և ուսանողների հետ տարվող աշխատանքների հայեցակարգի հաստատումն մասին հարցը, իսկ Կ. Գրիգորյանն առաջարկեց ԵՊՀ հասարակայնության հետ կապերի ռազմավարության հաստատման հարցն ընդգրկել ապրիլյան օրակարգում:

Որոշեցին.- Հաստատել ԵՊՀ գիտական խորհրդի 2011-12 ուս. տարվա 2-րդ կիսամյակի ժամանակացույցը:

4. **Լսեցին.** - դոցենտի, պրոֆեսորի գիտական կոչումների շնորհման հարցը: Մրցութային հանձնաժողովների նախագահներ Գ. Հ. Պետրոսյանը և Ա. Ա. Սահակյանը ներկայացրեցին դոցենտի և պրոֆեսորի գիտական կոչում հայցող հավակնորդներին:

Պրոֆեսորի գիտական կոչում հայցող հավակնորդն էր.

	Ազգանուն անուն հայրանուն	Ամբիոնը, պաշտոնը	Գիտ. աստիճանը, շիֆրը, մասնագիտությունը
1.	Մանուչարյան Իվետա Կարապետի	Ռուսաց լեզվաբանության, տիպաբանության և հաղորդակցման տես. ամբիոնի դոցենտ	Բանասիրական գիտ. թեկն. /1985/ Ժ.02.03 – համեմատական և տիպաբանական լեզվաբանություն, դոցենտ - 1990

Դոցենտի գիտական կոչում հայցող հավակնորդներն էին.

	Ազգանուն անուն հայրանուն	Ամբիոնը, պաշտոնը	Գիտ. աստիճանը, շիֆրը, մասնագիտությունը
1.	Գևորգյան Էմմա Սերգեյի	Մարդու և կենդանիների ֆիզիոլ. ամբիոնի ասիստենտ	Կենսաբանական գիտ. թեկն. /1999/ Գ.00.09 – մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա
2.	Մկրտումյան Լիլիթ Յուրիկի	Իջևանի մասնաճյուղի հում. Ֆակուլտետի մանկավարժ. և հոգեբ. ամբիոնի ասիստենտ	Հոգեբ. գիտ. թեկն. /2007/ ԺԹ.00.01- հոգեբանության տեսություն և պատմություն
3.	Ադինյան Արտաշես Հովիկի	Զրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբ. ամբիոնի ասիստենտ	Երկրաբ. գիտ թեկն. /2009/ ԻԴ.01.03 – ընդհանուր երկրաբանություն, հիդրոերկրաբանություն, ճարտարագիտ. երկրաբան.
4.	Հարությունյան Տարոն Արթուրի	Ալիքային պրոցեսների տեսության և ֆիզիկայի ամբիոնի ասիստենտ	Ֆիզմաթ. գիտ. թեկն. /2006/ Ա.04.03 – ռադիոֆիզիկա
5.	Մխիթարյան Կարինե Մելիքի	Ռուս գրականության ամբիոնի ասիստենտ	Բանասիր. գիտ. թեկնածու /2008/ Ժ.01.03 – ռուս գրականություն
6.	Պետրոսյան Աննա Գագիկի	Անգլերենի թիվ 1 ամբիոնի ասիստենտ	Բանասիր. գիտ թեկն. /2010/ Ժ.01.07 – արտասահմանյան գրականություն

Հավակնորդներից Լիլիթ Մկրտումյանի՝ ուսանողների կողմից գնահատման վերաբերյալ տվյալների բացակայության պատճառով վերջինս հանվեց քվեարկվողների ցուցակից:

Թեկնածուներին թույլատրվեց ընտրվելու փակ, գաղտնի քվեարկությամբ: Քվեարկությանը մասնակցեցին գիտխորհրդի նիստին ներկա բոլոր 71 անդամները: Ստեղծվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ *Դավթյան Միսակ Արշամի (նախագահ), Օսիպյան Լիա Լևոնի, Դիրանդյան Մամվել Աղվանի, Խանադյան Արմեն Հորիզոնի, Բալոյան Արտյոմ Վաղինակի:*

Պրոֆեսորի կոչում հայցող թեկնածուն ընտրվեց փակ, գաղտնի քվեարկությամբ հետևյալ ձայներով.

h/h	Ազգանուն, անուն, հայրանուն	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Մանուչարյան Իվետա Կարապետի	58	8	5

Դոցենտի կոչում հայցող թեկնածուներն ընտրվեցին փակ, գաղտնի քվեարկությամբ հետևյալ ձայներով.

h/h	Ազգանուն, անուն, հայրանուն	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Գևորգյան Էմմա Մերգելի	68	2	1
2.	Աղինյան Արտաշես Հովհիկի	69	1	1
3.	Հարությունյան Տարոն Արթուրի	69	1	1
4.	Մխիթարյան Կարինե Մելիքի	68	3	0
5.	Պետրոսյան Աննա Գագիկի	66	4	1

Որոշեցին.- 1.1. Հաստատել հաշվիչ հանձնաժողովի ներկայացրած արդյունքները:

1.2. Վերոնշյալ հավակնորդներին շնորհել համապատասխանաբար պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ:

1.3. Տասնհինգ օրվա ընթացքում նրանց գործերը ներկայացնել ՀՀ ԲՈՀ՝ շնորհված գիտական կոչումները հաստատելու և դիպլոմներ տալու համար:

5. Լսեցին.- ԵՊՀ ֆակուլտետի օրինակելի կանոնադրության (նոր խմբագրությամբ) հաստատում: (Զեկ.՝ ԵՊՀ իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի նախագահ Գ. Ս. Ղազինյան): Գ. Ղազինյանը նշեց, որ կանոնադրության նախագծերը իրավական ակտերի մշակման և փորձաքննության հանձնաժողովում մշակման ենթարկվելուց հետո ներկայացվել են բոլոր ֆակուլտետներին, որոնց կողմից ստացված առաջարկությունների մի զգալի մասն ընդգրկվել է նախագծի՝ գիտխորհրդի հաստատմանը ներկայացվող տարբերակում: Գ. Ղազինյանը մեկ առ մեկ թվարկեց բոլոր առաջարկությունները և դիտողությունները, որոնք կատարվել էին ֆակուլտետների կողմից՝ նշելով նախագծի վերջնական տարբերակում տեղ չգտած առաջարկությունների հիմքերը:

Ռ. Գրիգորյանը նշեց բյուջեի եկամուտների և ծախսերի հավասարաչափության հանգամանքը, ինչպես նաև շեշտեց այն միջոցները, որոնք ձեռնարկվել են 2011-12 ուս. տարվա առաջին կուրսեցիների խիստ նվազ թվի պայմաններում առաջնային անհրաժեշտության ծախսերը լիարժեք հոգալու նպատակով:

Արտահայտվեցին.- ռեկտոր Ա. Հ. Միմոնյանը, պրոռեկտորներ Գ. Գ. Գևորգյանը, Ա. Կ. Գրիգորյանը, Ռ. Լ. Մարկոսյանը, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան Յ. Լ. Վարդանյանը, ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան Վ. Ժ. Դումանյանը, տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Հ. Լ. Մարգարյանը, աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Մ. Ա. Գրիգորյանը, դիսկրետ մաթեմատիկայի և տեսական ինֆորմատիկայի ամբիոնի վարիչ Ա. Ա. Ալեքսանյանը, ՌԻԽ նախագահ Յ. Ա. Ակոսյանը:

Հ. Մարգարյանն առաջարկեց ֆակուլտետի գիտխորհրդի կազմի՝ ընտրովի անդամության քվոտաները թողնել ֆակուլտետի հայեցողությանը; առաջարկը չընդունվեց, քանզի քվոտաների սահմանման կարգն արդեն իսկ հաստատված է ԵՊՀ կանոնադրությամբ: Ա. Ալեքսանյանի առաջարկով կանոնադրության 21-րդ կետում <<հաստատմանն է

ներկայացնում խորհրդի անդամների» բառերից հետո ավելացվեց <<նոր>> բառը: Գ. Ղազինյանը ներկայացրեց իրավական ակտերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի անդամ Յ. Ակոպյանի հատուկ կարծիքը, ըստ որի 21-րդ կետի 2-րդ նախադասությունը՝ <<Խորհրդի լիազորությունների ավարտից մեկ ամիս առաջ դեկանը ռեկտորի հաստատմանն է ներկայացնում խորհրդի անդամների նոր ցուցակը>> պետք է վերաձևակերպել հետևյալ կերպ. <<Խորհրդի լիազորությունների ավարտից մեկ ամիս առաջ դեկանը ռեկտորի հաստատմանն է ներկայացնում խորհրդի անդամների ցուցակը, բացի սույն կանոնադրության 20-րդ կետով նախատեսված սովորող անդամների ցանկից: Խորհրդի սովորող անդամների ընտրության արդյունքները (այդ թվում սովորող անդամի փոփոխությունները նրա կարգավիճակի փոփոխության կամ կրթության ընդհատման հետ կապված) ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահը ներկայացնում է Համալսարանի ուսանողական խորհրդի նախագահին, որն էլ մեկ շաբաթյա ժամկետում ներկայացնում է ԵՊՀ ռեկտորին՝ խորհրդի անդամների կազմը հաստատելու կամ նրանում փոփոխություններ կատարելու նպատակով: Սովորող անդամների ընտրության ընթացքում ընթացակարգային էական խախտումներ հայտնաբերելու դեպքում ուսանողական խորհրդի նախագահության որոշմամբ կազմակերպվում են նոր ընտրություններ>>: Իր հատուկ կարծիքը Յ. Ակոպյանը հիմնավորեց այն նկատառումներով, որ 1/ այս դրույթի ներմուծումն առավել նպաստում է ուսանողական ինքնավարության կայացմանը, որ 2/ այս դեպքում գործում է ԵՊՀ խորհրդի սովորող անդամների ցուցակի ներկայացման և հաստատման կարգի անալոգը, որ 3/ ֆակուլտետի ուսանողական խորհուրդը ազատ կլինի ֆակուլտետի խորհրդի սովորող անդամների ցուցակ պատրաստելու հարցում: Պրոռեկտոր Ա. Գրիգորյանը նշեց, որ այս դեպքում, համալսարանական մակարդակի ՈԻԽ-ի միջամտությամբ պայմանավորված, ավելի կնվազի ֆակուլտետային մակարդակի ՈԻԽ-ի ինքնավարությունը: Գ. Ղազինյանը նշեց, որ ֆակուլտետի խորհրդի սովորողների ցուցակը կազմելիս ոչ ոք չի կարող միջամտել ֆակուլտետի ՈԻԽ-ի գործունեությանը, իսկ միջամտելու դեպքում առկա են բոլոր իրավական և վարչական հնարավորությունները ցանկացած անօրինականություն կանխելու համար:

Ռեկտոր Ա. Հ. Միմոնյանը քվեարկության դրեց կանոնադրության նախագիծը առանց 21-րդ կետի: Գիտխորհրդի անդամները միաձայն հավանություն տվեցին նախագծի՝ առանց 21-րդ կետի տարբերակին: Այնուհետև Ա. Միմոնյանը քվեարկության դրեց հանձնաժողովի կողմից ներկայացված նախագծի 1-ին տարբերակը, որտեղ 21-րդ կետում չէր նախատեսվում Յ. Ակոպյանի առաջարկած դրույթը: Կողմ քվեարկեցին 52, դեմ՝ 15, ձեռնպահ 4 անդամներ:

Որոշեցին. - 1. Հաստատել բաց քվեարկության արդյունքները և ըստ այդմ հաստատել ԵՊՀ ֆակուլտետի օրինակելի կանոնադրությունը նոր խմբագրությամբ:

2. ՈԻԺը կորցրած ճանաչել 2002թ. նոյեմբերի 28-ին ԵՊՀ գիտխորհրդի կողմից հաստատված ԵՊՀ ֆակուլտետի օրինակելի կանոնադրությունը:

3. Հանձնարարել ԵՊՀ ֆակուլտետների ղեկաններին մեկամսյա ժամկետում մշակել, ֆակուլտետների խորհուրդներում ընդունել և ԵՊՀ գիտական խորհրդի հաստատմանը ներկայացնել ֆակուլտետների կանոնադրությունները:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

6. Լսեցին. - 2012-2013 ուսումնական տարվա ԵՊՀ Բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսման վարձավճարների չափերի սահմանում: (Ձեկ.՝ պրոռեկտոր Գ.Գ. Գևորգյան): Պրոռեկտոր Գ. Գևորգյանը նշեց, որ մի քանի մասնագիտությունների համար նախատեսված վարձավճարների չեփերը ենթակա են փոփոխության՝ պետության կողմից համապատասխան մասնագիտության համար հատկացվող գումարի չափին համարժեք դարձնելու նպատակով:

Արտահայտվեցին. – Ռեկտոր Ա. Հ. Միմոնյանը, տնտեսագիտության ֆակուլտետի ղեկան Հ. Սարգսյանը, ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի ղեկան Վ. Դումանյանը, ՈԻԽ փոխնախագահ Ն. Մելքոնյանը:

Որոշեցին. – Հաստատել ԵՊՀ 2012-2013 ուս. տարվա ուսման վարձերի (այդ թվում ուսուցման առկա և հեռակա ձևերի, Բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի, ինչպես նաև ՀՀ, ԱՊՀ և օտարերկրյա քաղաքացիների) չափերն ըստ մասնագիտությունների:

7. Լսեցին. - Ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգում լրացում կատարելու մասին: (Ձեկ.՝ պրոռեկտոր Գ.Գ. Գևորգյան):

Արտահայտվեցին.- Ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Ժամհարյանը, մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի ղեկան Ա. Սահակյանը:

Որոշեցին. –

7.1 <<Երևանի պետական համալսարանի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգում>> կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1.1. Կանոնակարգի 10.9.-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
<<10.9. Երևանի պետական համալսարանում հիմնական աշխատանքային պայմանագրով աշխատող-ուսանողներին և նրանց երեխա-ուսանողներին>>:

1.2. Կանոնակարգը լրացնել 10.10.-րդ ենթակետով հետևյալ բովանդակությամբ.
<<10.10. առանձնահատուկ դեպքերում, ԵՊՀ ռեկտորի որոշմամբ այլ կարգավիճակ ունեցող ուսանողներին>>:

1.3. Կանոնակարգը լրացնել 11.4.-րդ ենթակետով և շարադրել հետևյալ խմբագրությամբ.
<<11.4. 10.9. ենթակետում նշված դեպքերում՝

ա) Երևանի պետական համալսարանում 5-15 տարվա աշխատանքային ստաժ ունենալու դեպքում՝ պրոֆեսորադասախոսական համակազմի աշխատողների համար 60 % (մագիստրատուրայում՝ 40 %), մյուս տարակարգերի աշխատողների համար՝ 50% (մագիստրատուրայում՝ 30 %)։

բ) Երևանի պետական համալսարանում 16-25 տարվա աշխատանքային ստաժ ունենալու դեպքում՝ պրոֆեսորադասախոսական համակազմի աշխատողների համար 70 % (մագիստրատուրայում՝ 50 %), մյուս տարակարգերի աշխատողների համար՝ 60% (մագիստրատուրայում՝ 40 %)։

գ) Երևանի պետական համալսարանում 26 և ավելի տարիների աշխատանքային ստաժ ունենալու դեպքում՝ պրոֆեսորադասախոսական համակազմի աշխատողների համար 80 % (մագիստրատուրայում՝ 60 %), մյուս տարակարգերի աշխատողների համար՝ 70% (մագիստրատուրայում՝ 50 %)։

Երևանի պետական համալսարանում վարչական և գիտական պաշտոն զբաղեցնող աշխատողները, եթե տվյալ ուսումնական տարում դասավանդում են 0,5 և ավելի դրույքաչափով, օգտվում են պրոֆեսորադասախոսական համակազմի համար սահմանված չափերով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից:>>:

1.4. Կանոնակարգը լրացնել 11.5-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.
<<11.5. 10.10. ենթակետում նշված դեպքերում՝ ԵՊՀ ռեկտորի որոշմամբ>>:

7. 2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

8. Լսեցին.- ԵՊՀ անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակի հաստատման մասին: (Ձեկ.՝ ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Գ. Ժամհարյան): Հ. Ժամհարյանը նշեց, որ անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների թեկնածությունների առաջադրման գործընթացն անցել է ֆակուլտետների գիտխորհուրդներով և ուսանողական խորհուրդներով:

Որոշեցին.- Հաստատել 2011-12 ուս. տարվա 2-րդ կիսամյակի ԵՊՀ անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակը:

9. Լսեցին.- Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումների արդյունքների վերաբերյալ տեղեկատվության մասին: Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը առաջարկեց հարցը տեղափոխել գիտխորհրդի հաջորդ նիստ՝ հարցի մեծ ծավալի և ժամանակի սղության պատճառով: Ռեկտորի առաջարկությունն ընդունվեց միաձայն:

10. Լսեցին.- ԵՊՀ ինժեներական հոգեբանության լաբորատորիան <<Անձի և մասնագիտական գործունեության հոգեբանության գ/հ լաբորատորիա>> վերանվանելու մասին: (Ձեկ.՝ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի դեկան Ա. Ս. Բաղդասարյան):

Որոշեցին.- Հաշվի առնելով, որ ԵՊՀ ինժեներական հոգեբանության լաբորատորիան տարիներ շարունակ զբաղվել է մասնագիտական ընտրության, ուսուցման, մարդ-տեխնիկա համակարգի գործունեության արդյունավետության և հուսալիության խնդիրներով, որը այսօր կորցրել է իր արդիականությունը, հաշվի առնելով, որ վերջին տարիներին լաբորատորիան իր գործունեությունն ուղղել է անձի հոգեբանական անվտանգության բաղադրիչների ուսումնասիրմանն ու մասնագիտական գործունեության մեջ դրանց ապահովմանը, նկատի ունենալով, որ վերջին հինգ տարիներին հրատարակված հոդվածներն ու խմբային աշխատանքները նվիրված են անձի և մասնագիտական գործունեության հիմնախնդիրներին,

10.1 Երևանի պետական համալսարանի ինժեներական հոգեբանության լաբորատորիան վերանվանել «Երևանի պետական համալսարանի անձի և մասնագիտական գործունեության հոգեբանության գիտահետազոտական լաբորատորիա»:

10.2 Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

11. Լսեցին.- ընթացիկ հարցեր:

11.1. Լսեցին.- ԵՊՀ ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնի վարիչ Դավիթ Միերի Սեդրակյանի (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս), տեսական ֆիզիկայի ամբիոնի վարիչ Էդվարդ Վարդանի Չուբարյանի (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս) և ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան Յուրի Լազարի Վարդանյանի (ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ) «**Հարաբերականության ընդհանուր տեսության սահմաններում տարօրինակ բարիոններ պարունակող աստղերի ուսումնասիրությունը**» աշխատանքների շարքը ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանի անվան մրցանակի ներկայացման հարցը:

Արտահայտվեցին.- ռեկտոր Ա. Սիմոնյանը, ֆիզիկայի ֆակուլտետի դեկան Ռ. Ավագյանը:

Որոշեցին.- Հաշվի առնելով գերխիտ երկնային մարմինների ֆիզիկայի բնագավառում ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Դ. Սեդրակյանի, Է. Չուբարյանի և ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Յու. Վարդանյանի ներդրումը՝ նրանց հեղինակած «**Հարաբերականության ընդհանուր տեսության սահմաններում տարօրինակ բարիոններ պարունակող աստղերի ուսումնասիրությունը**» աշխատանքների շարքը ներկայացնել ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանի անվան մրցանակի:

11.2 Լսեցին.- ԵՊՀ կենտրոնների՝ բազային ֆինանսավորման ներկայացվող ծրագրերի հայտերը երաշխավորելու մասին:

Որոշեցին.- Երաշխավորել ԵՊՀ կենտրոնների՝ 2013թ. բազային ֆինանսավորման ներկայացվող ծրագրերի հայտերը

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ՝

Ա. Հ. Սիմոնյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ. Ա. Սողոմոնյան

16.02.2012թ.